ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/86

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.12.2017թ. թիվ 03/26-3/22415-17 գրությամբ «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 01.12.2017թ. թիվ ԱՇ/518-17 գրության հիման վրա, 05.12.2017թ. թիվ 03/26-3/22415-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 22.11.2017թ. հայտ է ներկայացրել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից կազմակերպված «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը 18.11.2017թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ: 20.11.2017թ. հանձնած հաշվետվությունից հետո առաջացել է պարտավորություն, որը միանգամից համարվել է ժամկետանց, բայց մարվել է ամբողջությամբ 23.11.2017թ.:

Ընկերությունը հայտնել է, որ գնման ընթացակարգին մասնակցում է առաջին անգամ, ուստի թույլ է տվել բացթողումներ, որոնք ներկա պահին շտկված են:

«Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 08.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.12.2017թ. թիվ ԱԾ/518-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարիքների համար 20.11.2017թ. հայտարարված «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը՝ Կոմիտեն, սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 08.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/86 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/86 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարիքների համար հավաստագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն 22.11.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.2 ենթակետով կայացված որոշմամբ «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 27.11.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն 22.11.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ***ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 165 750 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2017թ. ժամը 14:00-ի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 կետով կայացված որոշմամբ «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.12.2017թ. թիվ 03/26-3/22415-17 գրությունը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 01.12.2017թ. թիվ ԱԾ/518-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարիքների համար հավաստագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն 22.11.2017թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.2 ենթակետով կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որի վերաբերյալ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 24.11.2017թ. հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.11.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն 22.11.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ ***167 760 ՀՀ դրամի չափով:***

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 28-րդ հոդվածի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և

կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ***ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Այսպես, «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ

ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.11.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 167 760 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով նախատեսված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հիսուն հազար ՀՀ դրամի շեմը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2017թ. ժամը 14:00-ի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 կետով կայացված որոշմամբ «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով, Խորհուրդը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, գտնում է, որ «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ն «ՀՀ-ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.12.2017թ. թիվ 03/26-3/22415-17 գրությամբ «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝00896187) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**